

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԻԾԸ

Մատենադարանը հայկական ազգային կուլտուրայի գանձարանն է։ Հնագույն դարերից մեջ հասած մեծարժեք ձևաւորերը, որ պահպատ են Մատենադարանում, բացառիկ նշանակություն ունեն մեր ժողովրդի պատմության ուսումնասիրության և ընդհանրապես պատմակիության համար։ Մատենադարանի հարատությունը բաղկացած է 13.000 հատոր ձեռագրերից, հնագույն տպագիր հրատարակություններից և Մատենադարանի փոնդերի հետ կապված պատմական գրականությունից։

Ձեռագրերի և այլ փաստաթվերի այդ խիստ հարուստ հավաքածուն, որ հոգաւորությամբ պահպանել և մեր օրերն է հասցրել հայ ժողովուրդը, հատուկ խնամք է պահանջում պատմական փաստաթղթերի պահպանման ժամանակակից բարձր տեխնիկային համարակալիցից։ Այս կարևորագույն պահանջն առաջին հերթին պետք է բառարարի Մատենադարանի շենքը։

Շենքի համար կարևոր պայմաններից մեկն է կարմում կառուցման վայրը, որը շենքի նշանակության տեսակետից որոշ չափով հեռու գտնալիքով քաղաքի կենտրոնական մասից, միաժամանակ պետք է մոտիկ լինի դիտական հիմնարկություններին։ Դրա հետ միասին անհրաժեշտ է, որպեսզի շենքը տեղին արժանի լինի Մատենադարանի նշանակության։

Այս ելակետային պահանջներն էլ որոշել են շենքի կառուցման վայրը, որը գտնվում է Քանաքեռի բարձրավանդակի լանջին, Ստալինի անվան պողոտայի ծայրին, այն դիրքով, որ շենքի առանցքը զուդադիրի պողոտայի առանցքին և շենքն ամփոփի պողոտայի հեռանկարը։

Մատենադարանի շենքը զետեղվում է այնպիսի տեղ, որը 18 մետր բարձր է լինելու դեպք շենքը տանող սանդուխիքի առաջին աստիճանից։ Պողոտայի կողմէց շենքի մատուցյները լինելու են դարպան և ապա 130 մետր երկարություն ունեցող մի լայն ու կանաչաղարդ ծառուղի, որը հասնելու է մինչև շենքի առջեկի հրապարակը տանող աստիճանները։

Ձեռագրեր և այլ հնագույն փաստաթղթեր պահելու և զամանակները մշակված են թե սովորական և թե արտասահմանյան դատության կողմէց։ Այդ պահպանումը նախատեսում է մի շարք խիստ պարտադիր պայմաններ։ Դրանցից ամենակարևորն այն է, որ պահեստարանում հաստատվի անփոփոխի ջերմաստիճանի և խորավության առավել նպաստավոր ուժին։

Այս պայմանը կապված է սանիտարական և հիգինիկ լավագույն պայմանների անհրաժեշտության հետ, որոնք ձեռագրերը պահպանում են բորբոքից և այլ սնկային ու միջատարանական հիվանդություններից։ Պահաս կարևոր չէ ձեռագիրը պահպանել նաև փոշու թափանցումից, հրդեհից և այլն։ Ժամանակակից շատ մասնադեմների տեսակետով՝ պահեստարանում պետք է խոստագույն կերպով բացառիկ ցերեկլալույրը, մանավանդ ճառագայթները։

Բացի այս բոլորից, խիստ կարևոր է պահեստարանը պահպանել նաև օդային հարձակումներից։ Ներկա պատերազմի փողը գլուխություն ավելից, որ եվրոպական ժողովուրդների նմանօրինակ կուտաքրական գանձարաններն օդային հարձակումներից շիմնավորապես տուժել են այստեղ, որտեղ

Համապատասխան միջոցներ ձեռք չեն առնված դրանց անվտանգության համար:

Մատենադարանի շենքի նախադիմը կազմելիս հաշվի են առնված վերոհիշյալ և շատ այլ պայմաններ:

Այս բոլորի հետ միասին հարկալոր է նշել, որ հին ձեռադրերի պահպանմանը և ուսումնասիրությանը հարմարեցված շենքերը բացառություն են կազմում: Ձեռադրերի և այլ արժեքավոր փաստաթղթերի պահեստարաններից շատերը գտնվում են խոշոր գրադարաններին կից, որպես ինքնուրույն բաժին, ունենալով պահպանման և սպասարկման իրենց հատուկ ուժից: Այս հանգամանքի տեսակետից Մատենադարանի շենքը պետք է գրավի հատուկ տեղ որպես արդյուն կուլտուրայի ձեռադրը նյութերի պահպանման և ուսումնասիրման բացառիկ ճարտարապետական օրենքություն է: Իսկ այս պահմանն իր հերթին պահանջում է որոշել շենքի բոլոր տարրերի ճարտարապետությունը, նկատի առնելով նրա արդարյան ընույթը, ձեռադրերի պահպանման տեխնիկայի ժամանակակից նվաճումները, ձեռադրերի ուսումնասիրության գործի դիտական դրվագը, այցելուների սպասարկումը, կոնսուրուցիան և այլն:

Բայտ նախադիմի ձեռադրերը պահպելու են ներքնահարկում, որտեղ նախատեսվում է գետերել նաև այն բաժինները, որոնք պետք է օժանդակ հանդիսանան. դրանք են ախտահանման բաժինը, ձեռադրերի կոնսերվացման և ուստավը լրացիայի լաբորատորին և այլն:

Շենքի վերին հարկերը նախատեսված են Մատենադարանի այցելուների սպասարկման համար: Առաջին հարկում լինելու են գլխավոր վետությունը, ցուցահանդեսային դաշիճը, լեկտորիումը, դիրեկտորի առանձնասենյալը և գրասենյակը: Երկուրդ հարկը հիմնականում հատկացված է դիտական աշխատողներին. այստեղ լինելու է պարագմունքի տասն առանձնասենյակ, որոնք այնպես են կառուցվելու, որ շրջապատի ձայները ներս չթափանցեն: Երրորդ հարկում դետեկտում են նիստերի դաշիճը, ըստության մեջ գործում գուղքորդված են Հոռոմություն և Սանահնի վանքի գալիթի եղանակները, որոնք հարկավ զգալի չափով վերացակած են:

Հայագիտության դաշիճը, ընթերցարանը, որոնք ունենալու են մի շարք ոպասարկող բաժիններ, ինչպես օրինակ գրացուցակների բաժինն, օժանդակ գրականության սենյակ, տեղեկատութիրվողը գիտական բաժինն, բաժին վարիչի առանձնասենյակ և այլն: Չորրորդ հարկում հիմնականում զետեղվելու են հին գրացուցակի բաժինն, կոմայլեկտավորման բաժինն, դիտական բիբլիոգրաֆիական բաժինը և օժանդակությունը:

Վերոհիշյալ դաշիճներն ու վեստիրյուլը կառուցվում են հին հայկական ճարտարապետական-կոնստրուկտիվ և զանակներով. միայն թե վերջիններս անհրաժեշտ վերամշակման են ենթարկված ժամանակակից ձեւերին մոտեցնելու համար: Անուարակույս, ինտերյերների որոշ դեկորատիվ բնույթը, որն արտահայտված է շենքի ուժուն և նշանակությանը համապատասխան, անհրաժեշտ է և արդարացնում է իրեն: Աղբային ճարտարապետության գրայիշչէ համականիշներն այս շենքում պետք է արտահայտվեն որքան կարելի է վառ և ուժեղ կերպով: Վեստիրյուլը ճարտարապետության մեջ օդուագործված են Սանահնի վանքին գալիթի ճարտարապետական ձեւերը:

Հայագիտության դաշիճի ճարտարապետական կառուցման մեջ օդուագործված են Համապատի վանքը մեծ գալիթի կոնստրուկտիվ ձեւերը: Նիստերի դաշիճի ճարտարապետությունը որոշված է 11—12-րդ դարերի դաշիճների պլանավորման տարածված եղանակների ուղղով, որտեղ քառասյուն հիմքի վրա հանգչում է գմբեթը իր ծանրությունը փոխանցելով ոյտներին առաջանալի բիջոցով: Նիստերի դաշիճի ճարտարապետության ձեւերում զուգորդված են Հոռոմություն և Սանահնի վանքի գալիթի եղանակները, որոնք հարկավ զգալի չափով վերաց-

շակած են:

Ինչպես կարելի է տեսնել ինտերյերների մշակումից խնդիր է դրված օդուագործելու: Հայկական ճարտարապետության դարդացման մի շրջան, որը Թուրքականից առաջ

իր գըքում համեմատում է օցին ոճի հետ։
Մատենադարանի մնացած խոչոր բար-
ժինները, ինչպես օրինակ ցուցահանդեսա-
յին դաշինքը, լեկտորիումը, ընթերցարա-
նը, իրենց ճարտարապետական լուծման
տեսակետից ոճական ընդհանրություն ու-
նեն վերևում ճիշտակված դաշինքների և
վետիբյուլեների հետ։ դրանց կառուցման
մեջ շինականում օգտագործված է 11—13
դարերի ճարտարապետությունը։

Անտարակույս, այդէ դարաշրջանի ճար-
տարապետությունը, որը զուրկ է հնի
կրինության հատկանիշներից, հատկապես
Անի շատ հուշարձանները, ինչպես Հաղ-
պատի, Սանահնի — ծագել ու զարդացել
և քաղաքացիական ճարտարապետության
հետ միասին, զարդացող քաղաքային կյան-
քի ուժեղ ներգործությամբ։ Հենց այս է
կարմում մեր նախադիմի համար օգտագործ-
ված հուշարձանների հասուլ։ արժեքը,
այսինքն՝ այդ հուշարձանները չեն պատկա-
նում ֆեոդալական Հայուստանին և ամենի
մոտիկ են Մատենադարանի շենքի նշանա-
կությանը և իմաստին։

Անցնելով Փաստի նկարագրությանը,
պետք է նկատել, որ նախ և առաջ խնդիր
էր դրված գտնելու գլխավոր Փաստի
այնպիսի լուծում, որը նոր, ինքնուրույն
և յուրահատուկ կերպարանը տար Մատե-
նադարանի շենքին։ Աւատի խիստ կարևոր
էր ելակետ ունենալ ճարտարապետության
այն հուշարձանները, որոնք առաջադիմա-
կան հատկանիշների հետ միասին պարու-
նակելին հայկական ճարտարապետության
սրամմական դարդացման ուղիների խոր-

արտացոլումը, որը Մատենադարանի շենքի
նախադման համար թե անհրաժեշտ է և
թե կարեոր, քանի որ հենց այսուղ մենք
ուրարտավոր ենք այդ արտացոլումը զար-
դացնելու հասցնել մինչեւ մեր օրերը։

Ֆաստի կառուցման համար օգտա-
գործել է Անիի հուշարձանների և հատ-
կապես Առաքելոց եկեղեցու հարավային
դավթի ճարտարապետությունը։

Մյունիերի ոփթմը, որոնք այսուել կապ-
ված են Եռանիսատ որմախորշերի միջև եղած
պատի հետ, կենտրոնում լնդարձակլած է
Կմիավոր մուտքի տեղադրման համար կլա-
սիկ հնության մի եղանակ։

Ճարտարապետական ուժեղ ներփործու-
թյուն է ունենում վեթիսարի որմախորշե-
րի ոփթմիկ դասավորությունը, որոնք
կողմերի վառ լոյսավորությամբ և ստի-
րով գտնում են Փաստի վայելչակազմ հո-
գավորումը։

Հայկական ճարտարապետության հա-
մար բնորոշ հանդիսացող այս ձեւը կիրառ-
վելով Փաստի կլասիկ սիեմայի պայման-
ներում, անտարակույս արտահայտիչ կլի-
նի։ Ի հակարություն մուտքի որոշ չա-
փով պարսկական բնույթի, որ ունի
Առաքելոց եկեղեցու դավթիթը, Մատենադա-
րանի նախադում նկատի է առնված վա-
յելչարեղ ոլխավոր մուտք, որը ներդաշ-
նակում է հայկական ճարտարապետության
ազգային տրադիցիաների հետ։

Մատենադարանի շենքը ըստ նախագծի
երեսպատմելու է Երևանի հղիված բաղա-
տով։

Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

(«Դրաման թերթ», № 1—(321), հուն.)